## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am


______________N ________________

Ձեր N ______________________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ «ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ**

***Հարգելի պարոն Եղիազարյան***

Ի պատասխան Ձեր 2015 թվականի ապրիլի 28-ի 37/37.2/7038-15 գրության՝ կից ներկայացնում ենք ««Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 22-ի թիվ 346-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 26-ի թիվ 82-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1007-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի առնչությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական

փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**



**ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

**Կատարող՝ Մարգարիտա Կարապետյան**
**ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**
**Հեռ.** (010) 380-227

# ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**««Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»**, **««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

««Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»» ՀՀ օրենքի նախագծում առկա է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված կոռուպցիոն գործոնը: Այսպես՝ նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նախազգուշացումը որպես պատասխանատվության միջոց կիրառվում է, եթե կառույցը խախտել է սույն օրենքով սահմանված պայմաններից կամ պահանջներից որևէ մեկը: Այդ առումով գտնում ենք, որ հիշյալ կետի դրույթները պետական մարմնին (պաշտոնատար անձին) օժտում են լիազորությունների հայեցողական լայն շրջանակով, որը դրսևորվում է պաշտոնատար անձին սեփական հայեցողությամբ գործելու անհարկի լայն հնարավորություն ընձեռելու միջոցով՝ առանց նախատեսելու, թե որ դեպքում է վերջինս պարտավոր ընտրել վարքագծի այս կամ այն տարբերակը: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ պետք է հստակ սահմանվեն այն պայմանները կամ պահանջները, որոնց խախտելն առաջացնում է պատասխանատվություն՝

նախազգուշացման ձևով:

««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**ՀՀ ԱՆ Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**